Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մայիսի 7-ի N 714 - Լ որոշման

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ ՏԱՄՆՅՈԹԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակը կորոնավիրուսի տարածման հետևանքով Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիաների ոլորտի առանձին տնտեսավարողների մոտ առաջացած դժվարությունների հետևանքով արդյունավետ աշխատատեղերի պահպանությանն օժանդակելն է, ինչպես նաև ոլորտում նորարարական գաղափարների իրագործմանը և առևտրայնացմանը խթանելը :

2. Միջոցառման շահառու հանդիսանում են բարձր տեխնոլոգիաների ոլորտի այն տնտեսավարողները, որոնք՝

1) համապատասխանում են «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում նշված չափանիշներին.

2) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջին 12 ամիսների ընթացքում չունեն հարկային և վարկային ժամկետանց պարտավորություններ.

3) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջին 12 ամսվա ընթացքում դրամաշնորհ չեն ստացել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից:

3. Աջակցությունը տրամադրվում է դրամաշնորհի ձևով՝ սույն հավելվածի 2-րդ կետում նշված շահառու հանդիսացող՝ մրցույթի արդյունքներով հաղթող տնտեսավարողներին:

4. Հայտերի գնահատումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի հրամանով հաստատվող անկախ մասնագիտական մրցութային հանձնաժողովները, որոնք կազմված են ոլորտի ասոցիացիաներից, մասնագետներից և պետական շահառու գերատեսչությունների ներկայացուցիչներից:

5. Հայտերի գնահատումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից հրապարակվող մրցույթի հրավերով սահմանված կարգով՝ ըստ հանձնաժողովների կողմից նախօրոք

մշակված չափորոշիչների և գնահատման սանդղակների՝ հաշվի առնելով ներկայացված ծրագրի նորարարությունը, համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության ռազմավարական առաջնահերթություններին, իրագործելիությունը, ֆինանսական համապատասխանելիությունը, արտադրանքի իրացվելիությունը միջազգային շուկայում, տնտեսավարողի մասնագիտական ներուժը և այլ անհրաժեշտ չափորոշիչներ:

6. Մրցույթներին մասնակցող տնտեսավարողներին ներկայացվող հիմնական պայմաններն են՝

Դրամաշնորհի անվանումը	Դրամաշնորհի առավելագույն արժեքը	Մրցույթի շահառուների պայմանները
Նորարարական դրամաշնորհները	10.0 մլն դրամ	Վերջին 2 տարում ՀՀ-ում գրանցված և պրոդուկտներ ստեղծող տնտեսավարողներ
Կայացած ընկերություն-ների դրամաշնորհները	20.0 մլն դրամ	2 տարվանից ավելի ՀՀ-ում գրանցված և ծառայություններ մատուցող տեխնոլոգիական ընկերություններ (տնտեսավարողներ), որոնք պատրաստ են մշակել պրոդուկտներ
Համաֆինանսա վորման դրամա-շնորհները	100% չափով համա-ֆինանսավորում, սակայն ոչ ավելի, քան 30.0 մլն դրամ	Տեխնոլոգիական ընկերությունները (տնտեսա-վարողներ), որոնք կներգրավեն փաստա-թղթավորված և հաստատված ներդրումներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ